


աղբային սովորութեանց ու կրթութեան: Ընտանեկան կեանքը անկման շրջանի մէջ է և կանայք խիստ օտարամոլ են, ինչպէս հեղինակն արտւմ է «ի մի բան՝ եւրոպականացեալ կապիկներ են»:

Վաճառականութիւնը դեռ հայերի ձեռքն է՝ 700/0, թէն օտարները արդէն մօտք են գործել և նպաստաւորւում են: Գեղարուեստի և արհեստների ճիւղերի մէջն էլ հայերն յառաջադէմ են և մեծ տեղ ունին գրւած:

Կ. Պոլսոյ հայ պանդուխտների թիւն էլ, որ առաջ 30,000-ից աւելի էր, այժմ շատ պակասել է: Իսկ թրքահայերի համար ընդհանրապէս խիստ դժուար, նոյն իսկ երբեմն անկարելի է դարձած թէկուզ վաճառականութեան համար օտար երկիրներ երթալը:

Ստաւնդ վարդապետ



Извѣстія Кавказскаго отдѣла императорскаго русск. географическаго общества т. XVII. 1905—1906 № 4, 1907 т. XIX. № 1—II.

Կովկասեան բաժնի Կայսերական ուսումնական աշխարհագրական ընկերութեան այս երկու տեղեկատու տետրակները հետաքրքրական յօդուածներ են բովանդակում Կովկասի ուսումնասիրութեան վերաբերեալ Առաջին տետրակի մէջ. ա) Краткій очеркъ растительности Гагринскаго массива, Ю. Н. Вороновъ-ի, բ) Нѣмцы—колонисты въ с. Георгіевскомъ Елисаветпольскаго уѣзда. И. Е. Петровъ-ի, գ) Развалины древняго грузинскаго монастыря близъ сел. Ниакомъ и крѣпость Ванкъ, М. Н. Поповъ-ի, դ) 1904 և 1905 թ. տեղեկագրից երևում է, որ հայ կեանքի հետ կապ ունեցող դասախօսութիւններ են կարգացել 1) К. Н. Смирновъ — Հիւսիսային Գորդիստանում կատարած ճանապարհորդութեան մասին. ճանապարհորդութիւնը կատարւած է Իդդիրից Բայազէտ, Բեգրի—Կալա, Արճէշ, Բիթլիս, Մուշ, Խնուս, Մանազկերտ, Կարակիլա, Թուրաք-Կա-

լէ, Հասան-Կալէ, Էրզերում, Իգ. և Օլթի, Հետաքրքրական մասն է Բայազէտի, Բիթլիսի և Մուշի նկարագրութիւնը: Առաջինը միայն 5—600 տուն բնակիչ ունի, երկրորդը 6000 տ., մօտ 25000 բնակիչներով, իսկ երրորդը 3000 տ. մօտ 15000 բն., որից $\frac{2}{5}$ մահմեդականներ են: Բ) Պ. Հ. Առաքելեան կարգացել է Պարսկաստանի քրդերի մասին՝ տպուած սոյն հրատարակութեան, XVII հատոր № 1 ութ գ) պ. Ե. Լալայեան՝ Գանձակի նահանգի հայերի մէջ եղած աւանդութիւնների մասին կենդանիների վերաբերութեամբ, տպ. № 3, հատոր XVIII. գ) Պ. Մեղաւորեան տպագրել է Տեղեկատուի № 5, հատոր XVIII-ի մէջ մի յօդուած՝ Ճորտի աւազանի ժողովուրդների՝ մահմեդականութիւնն ընդունած հայերի և վրացիների (Աճարացիք և Լազեր) ազգագրական պայմանների զարգացման մասին:

Երկրորդ տետրակի մէջ յիշելի են ա) Изъ путевыхъ наблюдений отъ Батума до Лимана, պատկերազարդ. Н. Н. Шавровъ-ի, և Гидель О. Ахурь-ионь, 1840 года: Այս վերջին յօդուածը 1840 թ. Սուրմալուի գաւառապետի յայտարարութիւնն է Ակոռի գիւղի կործանման մասին, որ հանուած է Երեւանի նահանգի կառավարութեան գիււանից: Այդ յայտարարութեան համաձայն երկրաչարքը սկսուել է յունիսի 20-ին, իսկ գաւառապետը Ակոռի գիւղի կործանման մասին տեղեկութիւն է ստացել նոյն ամսի 22-ին: Յայտարարութեան հեղինակն անմիջապէս ճանապարհ է ընկնում այնտեղ և տեսնում է գիւղը ծածկուած քարակոյտներով և սառցակոյտներով: Ծածկուած էին նաև Ս. Յակոբի վանքն ու սարդարի տունը: Փլուածքը 10 վերստ տարածութիւն էր բռնում և ծածկել էր ամբողջ գիւղն ու նորա ցանքսերը, այգիները: Գաւառապետի ներկայութեամբ նոյն ամսի 24-ին կրկին անգամ սարից վիււածք է իջել ու ծածկել ձնացած այգիները: Գիւղի բնակիչներից ազատուել են 107 հոգի՝ երկու սեռից, որոնցից 35-ը գիւղի մէջ են եղել, գիւղը 161 տուն է ունեցել, կորածների թիւը հաշուած է մօտ 500:

Գ. Պատկերազարդումներ Պարսկաստանի քրդերի մասին: Գ.